ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՌԻՃԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ (1980—1982)

Հայաստանի պատմության պետական թանգարանի արշավախումբը (ղեկավար՝ Տ. Ս. Խաչատրյան) Արթիկի շրջանի Հառիճ գյուղի հարավային մասում 1966 թվականից սիստեմատիկաբար կատարում է հնագիտական ուսումնասիրություններ։ Պեղումների ընթացքում հայտնաբերվել է բազմաշերտ ամրոց և հնագիտական հրակայական նյութ, որը ընդգրկում է մ. թ. ա. երրորդ հազարամյակից մինչև առաջին հազարամյակը։ Այդ նյութերը հրատարակվել են[1]։ Նույն վայրում, հուշարձանի վերին շերտերում հայտնաբերվել են նաև միջնադարյան շրջանին պատկանող շինություններ և նյութական մշակույթի մնացորդներ (նկ. 1), որոնց մասին ուսումնասիրություններ դեռևս հրատարակված չեն։

ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման ու օգտագործման վարչությունը 1980 թ. Հառիճավանքի շրջակայքում (պարսպի ներսում) բարեկարգման աշխատանքներ է կատարել։ Այդ աշխատանքների ժամանակ Հառիճի հնագիտական արշավախումբը, մեր ղեկավարությամբ, մոտ 800 քառ. մետր տարածության վրա բացել է բնակելի, տնտեսական և արտադրական նշանակություն ունեցող կառույցներ և գտել արհեստագործական արտադրանքի բազմաթիվ նմուշներ։

Կառույցների պատերը շարվել են կոպտատաշ քարերով, տեղ-տեղ նկատվում են տարբեր շրջանների վերակառուցումներ։ Շինությունների հատակը հիմնականում հարթեցված բնական տուֆից է, միայն մեկ սենյակում, հատակին և պատի վրա, պահպանվել են կավածեփ սվաղի հետքեր։ Նույն սենյակում գտնվել է կենտրոնում անցք ունեցող մշակված տուֆ քար։ Այն տեղադրված է եղել տանիքի կենտրոնում, լույսի, ինչպես նաև դուրս ելնող ծխի համար։ Նման երդիկի քարեր մինչև հիմա պահպանվել են գյուղի



Նկ. 1. Հառիճի վանքի բակում բացված միջնադարյան արտադրական համալիրը։

[1] Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, *տես նաև՝ «Հառիճա վանական ընկերության հիշատակարանն ու հաշիվները», Ալեքսանդրապոլ, 1910, Հովսեփ Ծղիազարյան, Շիրակի լեռնահովիտի պատմական հուշարձանները, Երևան, 1975։*

հացատների տանիքներին։ Գտնվել են փայտե սյան քարե խարիսխներ, որոնց վրա հենվել է հազարաշեն ծածկը։ Դրանք երեք, երբեմն չորս հատ են։ Համեմատաբար լավ է պահպանվել սենյակներից մեկը (4,5×4,5 քառ. մ). պատերը կանգուն են մոտ մեկ մետր բարձրությամբ, ունի երկու աստիճանով մուտք, որը իջնում է դեպի կից, կիսակոր, 3×3 քառ. մ տարածք ունեցող սենյակը. այն հավանաբար եղել է նկուղային հարկաբաժին։ Արտադրական սենյակներից մեկում բացվել է բրուտի հնոց՝ փորված բնական տուֆ քարի մեջ (տրամագիծը՝ 1 մ, բարձրությունը՝ 1 մ)։ Տուֆի հիմնապատի վրա կանգուն է մնացել պատի շարվածքի միայն մի փոքրիկ հատվածը, ինչպես նաև հատակը, որն ամբողջությամբ լցված է մոխրով։ Հնոցի հատակի ձևը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ այն ունեցել է անկանոն քառանկյունի, այսպես կոչված տրապեցաձև հատվածք։ Հնոցի շրջապատում գտնվել են բարձր ջերմաստիճանից այրված քարի կտորներ (տուֆ, գետաքար)։ Ինչպես նաև կավանոթների մի քանի խոտան բեկորներ։ Վառարանին կից բացվել է գետաքարերով շարված առվակ, որով ջուրը լցվել է տուֆից փորված փոքրիկ ավազանի մեջ։ Սա վկայում է տեղում խեցեղենի արտադրության առկայության փաստը։

Պեղավայրում բացվել է բնական տուֆ քարի մեջ փորված 1 մ տրամագծով և 50 սմ խորությամբ մեկ այլ մրապատ հնոց, որի վերգետնյա շարվածքը վատ է պահպանված, բայց նկատվում է օդանցքի հետքը։ Հնոցի մեջ գտնվել է կարմիր փայլեցրած թասի շուրթի մաս, որի վրա կարդացվում են հայերեն տառեր։ Պատերի կանոնավոր շարվածք ունեցող մեկ այլ սենյակի (3×3 մ, պատերի հաստությունը՝ 80 սմ) հատակը բնական տուֆ քարից է։ Սենյակի միջով անցնում է տուֆի մեջ 60 սմ փորված առվակ, որը ծածկված է գետաքարերով։ Այս շինությանը կից կա գետաքարերով կանոնավոր շարված ստվար մոխրաշերտ ունեցող ևս մեկ կառույց (լայնությունը 1 մ, երկարությունը՝ 4 մ), որտեղից գտնվել են մեծ քանակությամբ հում և այրված կրաքարի բեկորներ։ Այս երկու շինությունները, ամենայն հավանականությամբ, անմիջապես կապվել են միմյանց հետ։ Թերևս այստեղ են հանգցրել կիրը՝ շինարարության մեջ օգտագործելու համար։

Պեղումների ընթացքում հայտնաբերվել են զգալի քանակությամբ խոհանոցային և ջնարակած հասարակ խեցեղենի բեկորներ, հախճապակի, ապակե ապարանջաններ, շինարարական խեցեղենի մնացորդներ, աշխատանքային քարե ու երկաթե գործիքներ, մեկ պղնձե դրամ։

Հասարակ խեցեղեն—առատ են մրապատ, սև կանթավոր կճուճների և քրեղանների բեկորները, որոնք պատրաստվել են տեղում։ Առանձնանում են երկու թասերի օղակաձև հատակի մասերը, որոնց վրա փորագրված է վարպետի նշան՝ խաչարդ՝ հպումնավոր չորս փոսիկներով (տախտակ I, նկ. 1)։ Գտնվել է մեկ ամբողջական մրոտված ձիթաճրագ, ինչպես նաև կավե խփերի բեկորներ՝ երկրաչափական փորագիր, գծավոր զարդերով։ Անհամեմատ լավ են պահպանված դրանց բրգաձև և փոսիկավոր բռնակները, որոնք նույնպես ունեն տարբեր երկրաչափական զարդագոտիներ (տախտակ I, նկ. 2)։ Ամբողջական իրերի մեջ առանձնանում է կարմրախեցի, կանթավոր փոքր սափորը, ուղիղ նեղ պարանոցով և ուռուցիկ իրանով (բարձրությունը՝ 10 սմ, բերանի տրամագիծը՝ 3 սմ, վզիկի բարձրությունը՝ 4 սմ) (տախտակ I, նկ. 3)։ Մեծ թիվ են կազմում կարմրափայլ անոթների բեկորները (տախտակ I, նկ. 4, 5)։ Պահպանվել են դրանց նուրբ շրթները, կլորավուն փոքրիկ կանթերը և հատակի մասերը։ Կան կարմրափայլ կլոր աղամանների բեկորներ, որոնց մեջ ուշագրավ է կլոր, բարձր, նուրբ, մի փոքր դուրս թեքված շրթով աղամանը։ Կարմրաներկ թասի մի բեկորի վրա, անմիջապես շրթին փորագրված է Հ Ս Տ տառաշարքը։

Աչքի են ընկնում ծակոտկեն զարդերով կճուճների մասերը՝ վերադիր գնդիկներով։ Բավական շատ են լայնաբերան, կանթավոր կարասների բեկորները, հարդարված փոսիկավոր, կետազարդ, գծագիր, ալիքավոր, եռանկյունաձև զարդերով։ Նման տեխնիկայով հարդարված անոթներ հանդիպում են միջնադարյան հնավայրերում (Դվին, Անի, Անբերդ և այլն)։ Կառույցներից մեկում հայտնաբերվել են վարպետի նշանով և կենաց ծառի պատկերով ջրատար խողովակի բեկորներ։ Սովորական խողովակի վրա փորագրված սիմվոլիկ եղևնաձև ծառը առնչվում է ջրի, կյանքի հարատևման գաղափարի հետ (տախտակ I, նկ. 6, 7)։

Ջնարակած խեցեղեն—ստվար խումբ են կազմում ջնարակած անոթների բեկորները, որոնք իրենց պատրաստման եղանակով, հարդարման ձևերով նման են Հայաստանի միջնադարյան հուշարձաններում հայտնաբերված XII—XIII դդ. խեցանոթներին։ Փիրուզագույն ջնարակով քրեղանը ունի դեպի ներս կլորացող շուրթ, իսկ մակերեսը հարդարված է ռոմբաձև զարդով (ձծագիր-փորագրության եղանակ)։ Անոթի վրա փորագրված է վարպետի նշան, որը հիշեցնում է ս. Աստվածածին եկեղեցու վրայի վարպետի նշանները (տախտակ II, նկ. 1, 2)։ Պեղավայրում հայտնաբերվել է հայատառ արձանագրությամբ կանաչ ջնարակած թասի մի բեկոր։ Այն թերի է. ընթեռնելի է միայն Ա Հ ԱՑ տառաշար-

Տախտակ I։

քը (տախտակ II, նկ. 3)։ Անոթը պատվել է անդրի հաստ շերտով, որի վրա գծագրության տեխնիկայով նկարվել են բուսական զարդեր և այնուհետև պատվել կանաչ շնարակով։ Հայաստան արձանագրություն ունի կանաչ գույնի կավանոթի մեկ այլ բեկոր։ Թերի լինելու պատճառով արձանագրությունը չի ընթերցվում։ Ջնարակած անոթներից ուշադրության է արժանի քրեղանի հատակի մասը, որի սպիտակ անգնդած մակերեսին նկարազարդման և թեթև գծագրման եղանակով թռչուն է պատկերված։ Փոքրիկ բեկորի վրա երևում է միայն թռչունի մարմնի մի մասը։ Պատկերը դարշնագույն է, կանաչ հրանգի տերևը վկայում է, որ թռչունը պատկերված է եղել բուսական զարդերի մեջ (տախտակ II, նկ. 4)։

Երկրորդ անոթի հատակին գծագրելու տեխնիկայով նույնպես թռչուն է պատկերված։ Այն տրված է կանաչի և դարշնագույնի համադրությամբ։ Լավ է արտահայտված թռչունի կուրծքը, որի վրա թեթև փորագրությամբ գծված է եռատերև բուսական զարդ (տախտակ II, նկ. 5)։ Թռչունի պոչին և սխեմատիկ գծագրված ոտքերին մուգ շագանակագույն կետեր են արված։ Եռատերև զարդ կրող թռչնապատկերներով անոթներ հայտնի են Հայաստանի XII—XIII դդ. հնավայրերից պեղված խեցանոթներից[2]։ Պտղաբերության նշանով եռատերև զարդը տարածված է զարդարվեստում՝ հատկապես մանրանկարչության և քանդակագործության մեջ[3]։ Նույն տեխնիկայով են հարդարված ջնարակած անոթների այն բեկորները, որոնց վրա կան օղակաձև, քառակուսի, շեղանկյուն, ռոմբաձև զարդեր։ Դրանց զուգահեռները հաճախ են հանդիպում Անիի և Դվինի XIII դ. մշակույթում։ Պեղավայրում գտնվել են ջնարակած անոթների խոտան բեկորներ, որոնց վրա պահպանվել են թրծման ընթացքում օգտագործվող կավե եռոտանու հետքեր։

Հայտնաբերվել են մուգ կոբալտով նկարազարդված և բաց երկնագույն ջնարակով պատած անոթների բեկորներ։ Երկնագույն կամ փիրուզագույն ջնարակի տակ կոբալտով արված զարդերը ցայտուն են և սև երանգ ունեն։ XIII դ. երկրորդ կեսից այս տիպի խեցեղենի արտադրությունը դառնում է մասսայական, ձեռք բերելով տեղի վարպետների մասնագիտական ընորհքը[4]։

Ջնարակած բեկորների մեջ առանձնանում է փիրուզագույն փոքր սափորի շրթնամասը, որն ունի կարճ պարանոց, ոչ շատ ուռուցիկ իրան՝ երեք թեթև ակոսավոր գծերով։ Գտնված իրերի մեջ մեծ թիվ են կազմում փիրուզագույն և երկնագույն ջնարակով պատված խեցեղենի բեկորները, որոնց անմիջական զուգահեռները կան Անիում, Մարմաշենում[5], Գառնիում և այլուր։ Փորագրության տեխնիկայով թեթև գծագարդված միագույն այս անոթների արտադրությունը լայն տարածում ուներ Անդրկովկասում, առավելապես Վրաստանում։ Դվինում այն հանդիպում է ավելի սակավ, հիմնականում XIII դարի շերտերում։ Այս անոթների վրա իշխում է կանաչի և դարշնագույնի համադրությունը։ Պեղված նյութերի մեջ փոքր խումբ են կազմում նավակաձև ձիթաճրագները, որոնցից մեկը պատված է վառ կանաչ ջնարակով և իր ձևով կրկնում է XII—XIII դարերի հայտնի ձիթաճրագները, իսկ մյուսը ավելի խորն է, ունի փռված լայն շուրթ, կանաչը ստացվել է ավելի մուգ և խամրած, քան նախորդինը (տախտակ II, նկ. 6)։

Սակավ հետաքրքիր չեն փիրուզագույն հախճապակե անոթների բեկորները, որոնցից մի քանիսի մակերեսը զարդարված է երկրաչափական պարզ գծերով։ Դրանցից մեկի իրանի վրայով անցնում են ակոսավոր թեք փորագիր զարդագծեր, իսկ մի քանիսը հարդարված են սև, մուգ կապույտ լայն գծերով։ Հարդարման այս պարզ ձևը տարածված էր միջնադարյան Հայաստանում՝ XII—XIII դդ.։ Ուշադրության են արժանի առյուծի վերադիր պատկերով, ինչպես նաև վարդյակ-զարդով երկնագույն անոթների երկու բեկորները (տախտակ II, նկ. 7)։ Մասնագետները կարծիքով հախճապակե այս ձևի անոթների հայրենիքը Հայաստանն է եղել, որից հետո միայն ընդօրինակվել է Վրաստանում և Գանձակում[6]։ Քանի որ վերադիր զարդերով հախճապակյա անոթների արտադրությունը բավականին բարդ պրոցեսի հետ էր կապված և պահանջում էր մեծ հմտություն, ուստի պետք է ենթադրել, որ հախճապակյա անոթները բերվել են Անիից։

2 Տ. Ս. Բաբայան, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդաձևերը, Երևան, 1981, նկ. 41, 45, 48։

3 Ա. Մնացականյան, Հայկական գեղարվեստ, Երևան, 1955, էջ 525։

4 Ա. Ս. Ժամկոչյան, Միջնադարյան Հայաստանի հախճապակին, Երևան, 1981, էջ 127։ Տե՛ս նաև՝ Հ. Լ. Պետրոսյան, Գառնիի ենթաշնարակային նկարազարդումներով խեցեղենը («Պատմա-բանասիրական հանդես», 1982, № 4, էջ 203)։

5 Մարմաշենի նյութերը ցուցադրված են Երևանի պետական համալսարանի հնագիտա-ազգագրական թանգարանում (պեղումների ղեկավար՝ Ս. Հարությունյան)։

6 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 222։



Таблиця II.

Ապակե իրերը քիչ են։ Դրանք հիմնականում կապույտ ապարանջանի, փոքր սրվակների, ինչպես նաև կլոր, ուռուցիկ նստուկ ունեցող նուրբ գավաթների բեկորներ են։

Մետաղե առարկաներ—գտնվել են զարդագամեր՝ սնկաձև և ուղղանկյուն գլխիկներով, գամեր՝ երկար և կարճ պոչերով (թվով 10 հատ), մեկ բանալի (երկարությունը՝ 24 սմ), դռան փակի մաս, բիզ՝ երկար պոչով (երկարությունը 10 սմ), երկծայրանի սրածայր գործիք՝ կենտրոնում բռնելու հարմարանքով և երկաթե դեղձիր։ Բրուտի հնոցի մոտ գտնվել է մեկ պղնձե դրամ։ Դրամագետ Խ. Մուշեղյանի կարծիքով այն Իկոնիայի (Փոքր Ասիա) սելջուկյան սուլթանության XII դ. դրամ է, որի հար և նմանը հայտնաբերվել է Հայաստանի հարավային շրջաններում։

Քարե իրեր—հայտնաբերվել են տեղում պատրաստված աշխատանքային քարե գործիքներ, կոկիչներ, ծեծիչներ և այլն։ Յուրօրինակ է հնոցի համար տուֆից պատրաստված կոճակը (տրամագիծը՝ 4 սմ)։ Պակաս հետաքրքիր չեն տուֆե խփերը, որոնցից մեկի վրա խաչաձև զարդ է փորագրված, իսկ տուֆ քարե 2 խոյակի բեկորները ամենայն հավանականությամբ առընչվում են ս. Աստվածածին եկեղեցու կառուցապատման հետ։

Այսպիսով, հնավայրում բացված թրծման երկու հնոցները, բարձր ջերմաստիճանի տակ այրված քարի ու կրաքարի մեծ քանակությունը և չնարակած խեցեղենի խոտանվաճ բեկորները վկայում են տեղում սեփական արտադրություն ունենալու փաստը[7]։ Համալիրի միաշերտությունը և նյութի նախնական քննությունը հնարավորություն են տալիս հնավայրը թվագրելու XII—XIII դարերով։

ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ

---

7 Հայտնի է, որ XII—XIII դդ. իրենց տնտեսական հզորությունն են վերականգնում Հովհաննավանքը, Մարմաշենը, Հառիճը, Հաղպատը և ուրիշ վանքեր։ Սա թելադրված էր ստեղծված սոցիալ-քաղաքական և տնտեսական պայմաններով։ Վանքերը իրենց սեփական տնտեսության հետ մեկտեղ ունեցել են բազմաթիվ արհեստավորներ, որոնք աշխատել են անմիջապես եկեղեցու համար։ Այդ մասին են վկայում ոչ միայն վիմագրական, այլև գրավոր աղբյուրները (Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն, Ակնարկներ միջնադարյան Հայաստանի պատմությունից, Երևան, 1966, էջ 34, Ս. Տ. Ե ր ա ն ց յ ա ն, Պատմություն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 164)։